ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Էդուարդ Հակոբյանի՝ 2023թ. նոյեմբերի 13-ից 17-ը ք.Նյու Դելի (Հնդկաստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Էդուարդ Հակոբյան, ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք.Նյու Դելի, Հնդկաստանի Հանրապետություն, 2023 թվականի նոյեմբերի 13-ից 17-ը

3. Հրավիրող կողմը՝

Ասիական զարգացման բանկ

***4.* Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն Ասիական զարգացման հիմնադրամի 14-րդ համալրման և Հնդկաստանի Հանրապետության ֆինանսների և կորպորատիվ հարցերի նախարարի հետ հանդիպումներին:

5. Քննարկված թեմաները՝

Ասիական զարգացման հիմնադրամը (ԱԶՀ) ստեղծվել է 1973 թվականին՝ առաջարկելով արտոնյալ վարկեր ցածր եկամուտ ունեցող երկրներին, իսկ 2005 թվականից սկսեցին տրամադրվել նաև դրամաշնորհներ: 2017 թվականից ի վեր ԱԶՀ-ն տրամադրում է միայն դրամաշնորհներ: ԱԶՀ ռեսուրսների համալրումների հանդիպումները առանցքային նշանակություն ունեն վերջինիս ֆինանսական միջոցների ներգրավման և դրանց օգտագործման ուղղությունների կանխորոշման տեսանկյունից:

ԱԶՀ 14-րդ համալրմանը քննարկվեցին այնպիսի կարևոր թեմաներ, ինչպիսիք են ԱԶՀ 12-րդ և 13-րդ համալրումների ներքո խոցելի երկրներին տրամադրված աջակցությունը, ԱԶՀ 14-րդ համալրման ռազմավարական ուղղությունները, ռեսուրսների բաշխման շրջանակը, տեխնիկական աջակցության ծրագրերը և այլն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի առաջին օրը քննարկվեցին ԱԶՀ գործունեության հիմնական ուղղությունները, առաջիկա անելիքները և քաղաքականության շրջանակը: Առանձին ելույթներով հանդես եկան նաև ԱԶՀ ռեսուրսներից հատկացումներ ստացող երկրների ներկայացուցիչները:

Երկրորդ օրը քննարկվեցին ԱԶՀ առաջիկա հատկացումների ավելի կոնկրետ ուղղություններ: Առանձին ելույթ հնչեցվեց նաև իմ կողմից: Մասնավորապես, նշվեց, որ ՀՀ կառավարությունը մեծապես արժևորում է ԱԶԲ կողմից Հայաստանի Հանրապետությանը

ցուցաբերվող շարունակական աջակցությունը, հատկապես՝ ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների օրակարգի համատեքստում, ինչպես նպատակային և բյուջետային աջակցության վարկային ծրագրերի, այնպես էլ տեխնիկական աջակցության գործիքների տեսքով:

Թեև Հայաստանը սկսած 2014 թվականից այլևս չի հանդիսանում ԱԶՀ շահառու՝ որպես միջինից բարձր եկամուտ ունեցող երկիր, այդուհանդերձ ԱԶՀ աջակցությունը, որը տրամադրվել է Հայաստանին 2007 թվականից ի վեր, օգնել է հաջողության հասնել այնպիսի նշանակալի ոլորտներում, ինչպիսիք են ջրամատակարարումը, գյուղատնտեսությունը, ճգնաժամային կառավարումը, ենթակառուցվածքների զարգացումը, ձեռնարկությունների խթանումը և այլն:

Կարևորելով ԱԶՀ դերը և վերջինիս գործունեությունը ի նպաստ խոցելի երկրների առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման, իմ կողմից հնչեցվեց Հայաստանի՝ ԱԶՀ դոնոր դառնալու մտադրության մասին, ինչը հիանալի հնարավորություն է Հայաստանի համար օգնելու ցածր եկամուտ ունեցող երկրներին՝ հասցեագրելու իրենց կարիքները, հաղթահարելու խնդիրները և առաջ մղելու իրենց բարեփոխումների օրակարգը՝ այդպիսով ՀՀ կողմից երախտագիտություն հայտնելով նախկինում ստացած նմանատիպ աջակցության համար:

ԱԶՀ ներկայացուցիչները մեծ ոգևորությամբ արձագանքեցին նշյալ գաղափարին և իրենց պատրաստակամությունը հայտնեցին նշյալ գործընթացների կազմակերպման հարցում հայկական կողմին աջակցելու կապակցությամբ:

Այցի շրջանակներում առանձին հանդիպում է կայացել նաև Հնդկաստանի ֆինանսների նախարարի տնտեսական հարցերով քարտուղար-տեղակալ Աջայ Սեթի հետ: Հանդիպմանը ներկա է եղել նաև Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վահագն Աֆյանը: Կողմերը քննարկել են միջգերատեսչական գործնական և հեռանկարային համագործակցության, ինչպես նաև երկկողմ օրակարգի ֆինանսավարկային նախաձեռնությունների գործիքակազմին առնչվող հարցեր:

Միաժամանակ, ներկայացվել են ՀՀ ընթացիկ տնտեսական զարգացումներն ու դրանց հետագա միտումները, տարբեր մարտահրավերների դիմագրավման ուղղությամբ ՀՀ կառավարության ջանքերը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց աջակցության առաջնային կարիքների ապահովմանն ուղղված երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը:

Հանդիպմանը անդրադարձ է եղել նաև երկու երկրների միջև համագործակցությանն առնչվող այլ կարևոր հարցերի, ներառյալ ներդրումների խթանումը և համատեղ տնտեսական նախագծերի իրականացումը:

7. ***Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝***
   - Ասիական զարգացման հիմնադրամի ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ շարունակելու ակտիվ համագործակցությունը,

այդ թվում՝ Հայաստանի՝ ԱՀՀ դոնոր դառնալու անհրաժեշտ աշխատանքներն ապահովելու համատեքստում:

- Հնդկական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ գործակցության առավել ընդլայնմանն ուղղված սերտ շփումների շարունակականության ապահովման և քննարկված գաղափարների իրականացմանը միտված անհրաժեշտ հետևողականության ցուցաբերման ուղղությամբ:

8. *Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները*

9. *Ստորագրությունը, ամսաթիվը՝*

Recoverable Signature

X

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Signed by: HAKOBYAN EDUARD 3001910811